Հաստատված է նոր խմբագրությամբ
«Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ
դիտորդ խորհրդի որոշմամբ

Գլխավոր տնօրեն՝ Հայկ Եգանյան

Haik Yeganyan

Digitally signed by Haik Yeganyan
DN: c=AM, st=Yerevan, l=Yerevan, o=Armenia Securities Exchange OJSC, email=info@amx.am, cn=Haik Yeganyan
Date: 2019.01.25 17:15:37 +04'00'

«17» հունվարի, 2019թ.
ք. Երևան
ՀՖԲ-01/075L

Նոր խմբագրությամբ գրանցված է

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկում

Նախագահ՝ Արթուր Ջավադյան

_____

« __ » _____ 2019թ.

Digitally signed by Arthur Javadyan
Date: 2019.02.12 16:09:43 AMT
Reason: Գրանցված է 08.02.19թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

Գլուխ 1. Հասկացություններ

1) Սույն կանոններում կիրառվող հասկացություններն ունեն սույն գլխով սահմանված նշանակությունները:
2) **«Աճուրդ».** պետական պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդ (այդ թվում՝ տեղաբաշխման լրացուցիչ աճուրդ) կամ հետգնման աճուրդ:
3) **«Աճուրդի համակարգ (այսուհետ նաև՝ Համակարգ)».** էլեկտրոնային եղանակով պետական պարտատոմսերի տեղաբաշխման և/կամ հետգնման աճուրդների կազմակերպման համար օգտագործվող ծրագրային ամբողջություն, որը նախատեսված է Օպերատորի մոտ պետական պարտատոմսերի տեղաբաշխման և/կամ հետգնման աճուրդների կազմակերպման, անցկացման և դրա հետ կապված տեղեկատվության մշակման և պահպանման, ինչպես նաև սույն կանոններով սահմանված այլ գործառույթների իրականացման համար:
4) **«Տեղաբաշխման աճուրդ».** պետական պարտատոմսերի տեղաբաշխման նպատակով կազմակերպվող մրցութային գործընթաց, որի ժամանակ պետական պարտատոմս ձեռք բերելու նպատակով Աճուրդի մասնակիցները ներկայացնում են գնման հայտեր, որոնք սույն կանոններով սահմանված կարգով Համակարգում գրանցվում, դասակարգվում, համադրվում են և կարող են բավարարվել Թողարկողի համապատասխան հանդիպակաց հայտի առկայության դեպքում:
5) **«Տեղաբաշխման լրացուցիչ աճուրդ».** տեղաբաշխման աճուրդից հետո հաջորդ աշխատանքային օրը, նույն վերջնահաշվարկի ամսաթվով, նույն արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագրով, ֆիքսված գնային մեթոդով պետական պարտատոմսի տեղաբաշխման աճուրդ, որն իրականացվում է տեղաբաշխման աճուրդի միջին կշռված եկամտաբերությամբ: Միջին կշռված եկամտաբերությունը հաշվարկվում է կնքված գործարքների եկամտաբերության և ծավալի արտադրյալների գումարը բաժանելով կնքված գործարքների ծավալների հանրագումարին՝ կլորացված զրո ամբողջ մեկ տասը հազարերրորդական թվի ճշտությամբ՝ համաձայն թվաբանական կլորացման կանոնների:
6) **«Հետգնման աճուրդ».** շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի հետգնման նպատակով կազմակերպվող մրցութային գործընթաց, որի ժամանակ պետական պարտատոմս վաճառելու նպատակով Գործակալները ներկայացնում են վաճառքի հայտեր, որոնք սույն կանոններով սահմանված կարգով Համակարգում գրանցվում, դասակարգվում, համադրվում են և կարող են բավարարվել Թողարկողի համապատասխան հանդիպակաց հայտի առկայության դեպքում:
7) **«Աճուրդի տարբերակիչ ծածկագիր».** Օպերատորի կողմից տրվող և պետական պարտատոմսերի տվյալ թողարկմամբ աճուրդների կազմակերպման եղանակը բնութագրող տարբերակիչ կոդանիշ, որը բաղկացած է տվյալ պարտատոմսի միջազգային տարբերակիչ ծածկագրից, ինչպես նաև աճուրդների կազմակերպման եղանակը բնութագրող սիմվոլ(ներ)ից (A՝ ամերիկյան աճուրդ):
8) **«Աճուրդի օր».** աշխատանքային օր, որի ընթացքում կազմակերպվում է պետական պարտատոմսերի աճուրդ:
9) **«Աճուրդի մասնակից».** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, ինչպես նաև Գործակալները, որոնք Օպերատորի հետ կնքված պայմանագրի համաձայն իրավունք ունեն մասնակցել Աճուրդին:
10) **«Գործակալ».** Պետական պարտատոմսերի շուկայի մասնակից, որը Թողարկողի հետ կնքել է պարտատոմսերի շուկայում գործակալի գործառույթների կատարման մասին պայմանագիր:
11) **«Առևտրի մասնակից».** Աճուրդի մասնակցի կամ Թողարկողի կողմից Աճուրդին մասնակցելու համար լիազորված ֆիզիկական անձ, որը սույն կանոններով սահմանված կարգով Աճուրդի տվյալ մասնակցի կամ Թողարկողի անունից մասնակցում է Աճուրդին:
12) **«Աճուրդի նույնացուցիչ».** x1x2x3yymmddx4x5nn ալգորիթմով ավտոմատ գեներացվող համար, որտեղ x1x2x3-ը բնութագրում են Աճուրդի տեսակը (AUC՝ տեղաբաշխման, RET՝ հետգնման),

հաջորդ վեց սիմվոլները թվերով արտահայտված Աճուրդի տարին, ամիսը և օրն է, x4-ը՝ Աճուրդի կազմակերպման եղանակն է (A՝ ամերիկյան աճուրդ), x5-ը՝ հիմնական (C) համ լրացուցիչ (N) Աճուրդի կոդն է, իսկ nn-ն[a] հերթական համարը, ընդ որում՝ nn-ը սկսվում է 01-ով և հաջորդաբար աճում է 1-ով (n-ը ոչ բացասական ամբողջ թիվ է):

13) **«Հաշվարկային բանկ».** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:
14) **«Թողարկող».** Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:
15) **«Օպերատոր».** «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերություն:
16) **«Գործարքի կնքում».** սույն կանոններով սահմանված կարգով Աճուրդի ընթացքում պետական պարտատոմսերի տեղաբաշխման (հետգնման) էական պայմանների և պետական պարտատոմսերի տեղաբաշխման (հետգնման) արդյունքում ծագող իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ Աճուրդի համակարգի միջոցով Աճուրդի մասնակիցների և Թողարկողի միջև էլեկտրոնային եղանակով համաձայնության կայացում:
17) **«Հայտ».** Աճուրդին մասնակցելու նպատակով Աճուրդի մասնակցի կամ Թողարկողի կողմից ներկայացվող գնման (վաճառքի) առաջարկ, որում նշվում են սույն կանոններով սահմանված՝ այդ առաջարկի բավարարման բոլոր էական պայմանները: Ներկայացվող հայտերը կարող են բավարարվել մասնակի:
18) **«Կտրման եկամտաբերություն».** Տեղաբաշխման (հետգնման) աճուրդի ընթացքում Թողարկողի կողմից Համակարգ մուտքագրվող՝ Թողարկողի վաճառքի (գնման) հայտում նշվող եկամտաբերություն, որից ավելի մեծ (փոքր) արժեք ունեցող եկամտաբերություններով Աճուրդի մասնակիցների կողմից ներկայացված հայտերը չեն բավարարվում:
19) **«Պետական պարտատոմսեր (այսուհետ նաև՝ պարտատոմսեր)».** Հայաստանի Հանրապետության անունից թողարկված պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսեր, ինչպես նաև միջնաժամկետ և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր:
20) Սույն կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, Օպերատորի կանոններով և ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի, միջնաժամկետ և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, հետգնման, շրջանառության և մարման կարգով» սահմանված նշանակությունները:

Գլուխ 2. Աճուրդին մասնակցելու իրավունք ունեցող անձինք

21) Աճուրդներին ուղղակիորեն կարող են մասնակցել միայն Աճուրդի մասնակիցները և Թողարկողը:
22) Տեղաբաշխման աճուրդի ժամանակ Աճուրդի մասնակիցները կարող են հանդես գալ միայն որպես գնորդ, իսկ Թողարկողը՝ միայն որպես վաճառող:
23) Հետգնման աճուրդի ժամանակ Գործակալները կարող են հանդես գալ միայն որպես վաճառող, իսկ Թողարկողը՝ միայն որպես գնորդ:
24) Աճուրդի մասնակիցները և Թողարկողն Աճուրդին մասնակցում են իրենց լիազորված ներկայացուցիչների՝ առևտրի մասնակիցների միջոցով: Առևտրի մասնակիցները պետք է տիրապետեն Աճուրդի համակարգի ֆունկցիոնալ հնարավորություններին, որը ստուգվում է Օպերատորի կողմից՝ նախքան Աճուրդի համակարգում Աճուրդին մասնակցելու թույլտվության տրամադրումը: Գործակալների անունից հանդես եկող առևտրի մասնակիցները պետք է ունենան նաև համապատասխան մասնագիտական որակավորում:
25) Աճուրդի մասնակիցներին և նրանց առևտրի մասնակիցներին Օպերատորը Աճուրդի համակարգում շնորհում է Աճուրդներին մասնակցելու իրավասություն՝ վերջիններիս կողմից Օպերատորի «Անդամակցության և շուկայի մասնակցության կանոններով» սահմանված փաստաթղթերը Օպերատորին ներկայացնելու օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում:

26) Թողարկողին և նրա առևտրի մասնակիցներին Օպերատորը Աճուրդի համակարգում շնորհում է տեղաբաշխման (հետգնման) աճուրդի հայտարարման և Աճուրդի ժամանակ Թողարկողի վաճառքի (գնման) հայտը Համակարգ մուտքագրելու իրավասություն՝ վերջինիս կողմից առևտրի մասնակցի վերաբերյալ տեղեկությունները (Հավելված 1) և առևտրի մասնակցին տրամադրվող իրավունքների քարտը (Հավելված 2) Օպերատորին ներկայացնելու օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում: Թողարկողի կողմից առևտրի մասնակցին տրված իրավասությունները Թողարկողը կարող է դադարեցնել սույն կանոնների Հավելված 3-ում սահմանված ձևին համապատասխան տեղեկացում ներկայացնելով Օպերատորին: Սույն կետում նշված հավելվածները ներկայացվում են թղթային եղանակով:
27) Աճուրդի ընթացքում Գործակալը կարող է հանդես գալ՝
ա) իր անունից և իր հաշվին, կամ
բ) իր անունից և հաճախորդների հաշվին:
28) Աճուրդի ընթացքում Կենտրոնական բանկը հանդես է գալիս իր անունից և հաճախորդների հաշվին:
29) Աճուրդի ընթացքում Թողարկողը հանդես է գալիս իր անունից և իր հաշվին:
30) Օպերատորի և Աճուրդի մասնակիցների, ինչպես նաև Օպերատորի և Թողարկողի միջև փաստաթղթերի փոխանցումն իրականացվում է թղթային կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով փաստաթղթերի փոխանցումն իրականացվում է կողմերի՝ ՍիԲԻէյՆեթ համակարգչային ցանցի իրավասու էլեկտրոնային հասցեներով, որոնց մասին կողմերը միմյանց տեղեկացնում են միմյանց միջև կնքված պայմանագրերով սահմանված կարգով:

Գլուխ 3. Աճուրդի օրերը և ժամերը

31) Աճուրդների օրեր կարող են լինել երկուշաբթիից ուրբաթ բոլոր աշխատանքային օրերը՝ բացառությամբ Համակարգի սպասարկմամբ պայմանավորված օրերից (տարվա ընթացքում առավելագույնը 10 օր), որոնց ցանկը հաջորդ տարվա համար Օպերատորը Թողարկողին է տրամադրում մինչև տվյալ տարվա Նոյեմբերի 1-ը, իսկ ցանկում կատարվող փոփոխությունները՝ դրանց ուժի մեջ մտնելուց առնվազն մեկ ամիս առաջ:
32) Աճուրդներն անցկացվում են Աճուրդների օրերին՝ Օպերատորի կողմից Համակարգ մուտքագրված ժամանակահատվածում, ընդ որում՝ եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով, ապա Աճուրդը կարող է սկսվել ժամը 11:00-ից ոչ շուտ և ավարտվել ժամը 17:00-ից ոչ ուշ, իսկ T+0 ռեժիմով վերջնահաշվարկի դեպքում՝ ժամը 14:00-ից ոչ ուշ: Օպերատորի կողմից մինչև տվյալ տարվա Նոյեմբերի 1-ը Թողարկողին ներկայացված գրավոր տեղեկացման մեջ հաջորդ տարվա համար նշված ժամանակաշրջանում Աճուրդները կարող են սկսվել նաև ժամը 10:00-ից:
33) Տեղաբաշխման (հետգնման) աճուրդի ժամանակ Աճուրդի մասնակիցների կողմից գնման (վաճառքի) հայտերի ներկայացման ժամանակահատվածը սահմանվում է Տեղաբաշխման (հետգնման) աճուրդի տվյալ օրվա ժամը 11:00-ից մինչև 11:30-ը, իսկ Թողարկողի կողմից կտրման եկամտաբերության որոշումը, դրա հիման վրա Թողարկողի կողմից Համակարգ վաճառքի (գնման) հայտի մուտքագրումն իրականացվում է դրան հաջորդող 15 րոպեների ընթացքում, որի արդյունքում Տեղաբաշխման (հետգնման) աճուրդն իրականացվում է ժամը 11:45-ին, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով: Թողարկողի կողմից սահմանված դեպքերում Աճուրդի մասնակիցների հայտերի մուտքագրման ժամանակահատվածը տվյալ Տեղաբաշխման (հետգնման) աճուրդի համար կարող է սույն կետով նախատեսված ժամանակահատվածից տարբեր լինել՝ պահպանելով 30 րոպեի նվազագույն ժամկետը, սակայն չի կարող ավարտվել ժամը 16:00-ից ուշ, իսկ T+0 ռեժիմով վերջնահաշվարկի դեպքում՝ ժամը 13:00-ից ուշ:
34) Տեղաբաշխման լրացուցիչ աճուրդի ժամանակ Աճուրդի մասնակիցների կողմից գնման հայտերի ներկայացման ժամանակահատվածը սահմանվում է տեղաբաշխման աճուրդի օրվա հաջորդ աշխատանքային օրվա ժամը 11:00-ից մինչև 11:30-ը, իսկ Թողարկողի կողմից Համակարգ

վաճառքի հայտի մուտքագրումն իրականացվում է դրան հաջորդող 15 րոպեների ընթացքում, որի արդյունքում Տեղաբաշխման լրացուցիչ աճուրդն իրականացվում է ժամը 11:45-ին, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով: Թողարկողի կողմից սահմանված դեպքերում Աճուրդի մասնակիցների հայտերի մուտքագրման ժամանակահատվածը տվյալ Տեղաբաշխման լրացուցիչ աճուրդի համար կարող է սույն կետով նախատեսված ժամանակահատվածից տարբեր լինել՝ պահպանելով 30 րոպեի նվազագույն ժամկետը, սակայն չի կարող ավարտվել ժամը 16:00-ից ուշ, իսկ T+0 ռեժիմով վերջնահաշվարկի դեպքում՝ ժամը 13:00-ից ուշ:

35) Եթե սույն կանոնների 33) և/կամ 34) կետով սահմանված 15 րոպե ժամանակահատվածում Թողարկողի կողմից Համակարգ վաճառքի հայտ չի ներկայացվել, ապա այդ ժամկետը ավտոմատ կերպով երկարացվում է 15 (տասնհինգ) րոպեով: Ընդ որում, նշված ժամանակահատվածը կարող է ավելի երկար ժամկետով երկարացվել, եթե սույն կանոնների 33) և/կամ 34) կետով սահմանված 15 րոպե ժամանակահատվածում Թողարկողը հեռախոսով և/կամ ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցով այդ մասին տեղեկացրել է Օպերատորին՝ նշելով երկարաձգման հստակ ժամկետը (որը չի կարող Աճուրդի ավարտի համար սույն կանոնների 34) կետով նախատեսված ժամկետից ուշ լինել), որի հիման վրա Օպերատորն ապահովում է Համակարգում աճուրդի իրականացման նոր ժամի մուտքագրումը:

Գլուխ 4. Աճուրդների հիմնական պայմանները

36) Պարտատոմսերի Աճուրդները կազմակերպվում են առանց դրանց համար նախատեսված պարտատոմսերի և դրամային միջոցների նախնական դեպոնացման: Օպերատորն Աճուրդի մասնակիցների և Թողարկողի հայտերն ընդունելիս չի ստուգում համապատասխան միջոցների առկայությունը:

37) Պարտատոմսերի տեղաբաշխման և/կամ հետգնման նպատակով կազմակերպվող աճուրդները իրականացվում են ամերիկյան փակ աճուրդի եղանակով, որի պայմաններն են՝
   ա) աճուրդի ընթացքում Աճուրդի մասնակիցների հայտերի բավարարումն իրականացվում է դրանցում նշված եկամտաբերությամբ, որոնք Համակարգ մուտքագրվում են ստորակետից հետո չորս նիշի ճշտությամբ,
   բ) Աճուրդի մասնակիցների կողմից Համակարգ մուտքագրված հայտերը դրանց մուտքագրման համար նախատեսված ժամանակի ավարտից հետո տեսանելի են միայն Թողարկողին, իսկ Աճուրդի մասնակցի առևտրի մասնակցին տեսանելի են միայն Աճուրդի տվյալ մասնակցի անունից ներկայացված հայտերը, ընդ որում՝ Աճուրդի մասնակցի առևտրային կոդը տեսանելի է միայն Աճուրդի տվյալ մասնակցի առևտրի մասնակիցներին,
   գ) Աճուրդի մասնակիցը յուրաքանչյուր Աճուրդին կարող է ներկայացնել ոչ ավելի, քան սեփական և/կամ հաճախորդների 100 հայտ:

38) Նույն օրվա ընթացքում կարող է կազմակերպվել մեկից ավելի տեղաբաշխման և/կամ հետգնման աճուրդ՝ մեկ կամ մեկից ավելի թողարկման պարտատոմսերի համար:

39) Աճուրդի օրը Օպերատորը բացում է Աճուրդը՝ նախաձեռնելով Աճուրդի մասնակիցների հայտերի ընդունման մեկնարկը և սահմանելով Աճուրդի հետևյալ պայմանները՝
   ա) պարտատոմսերի աճուրդի տարբերակիչ ծածկագիրը,
   բ) աճուրդի օրը,
   գ) աճուրդի տեսակը՝ տեղաբաշխման կամ հետգնման,
   դ) Աճուրդի մասնակիցների հայտերի ընդունման ժամանակահատվածը,
   ե) Աճուրդի եկամտաբերությունը՝ առկայության դեպքում,
   զ) վերջնահաշվարկի ամսաթիվը:

40) Աճուրդի մասնակիցների կողմից ներկայացվող հայտերում նշվում են դրանց բավարարման հետևյալ էական պայմանները՝
   ա) պարտատոմսերի աճուրդի տարբերակիչ ծածկագիրը,
   բ) հայտի տեսակը (գնման/վաճառքի),
   գ) պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը,

դ) գործարքի առարկա պարտատոմսերի ծավալը,
ե) հայտի շահառուի կոդը՝ ում հաշվին է ներկայացվում հայտը (Principal՝ սեփական հայտի դեպքում և Agent՝ հաճախորդների դեպքում):

41) Թողարկողի կողմից ներկայացվում է մեկ հայտ, որում նշվում են դրա բավարարման հետևյալ էական պայմանները՝
ա) պարտատոմսերի աճուրդի տարբերակիչ ծածկագիրը,
բ) հայտի տեսակը (գնման/վաճառքի),
գ) պարտատոմսերի կտրման տարեկան եկամտաբերությունը,
դ) տեղաբաշխման կամ հետգնման ենթակա պարտատոմսերի ծավալը:

42) Աճուրդի մասնակիցները և Թողարկողը հայտերը Համակարգ մուտքագրում են իրենց տարածքում գտնվող՝ Համակարգի հեռացված տերմինալի միջոցով:

43) Աճուրդի մասնակիցների կողմից Համակարգ ներկայացված գնման (վաճառքի) հայտերն ընդգրկվում են հայտերի հերթում ըստ եկամտաբերության աճի (նվազման): Նույն Հերթում մեկից ավելի հայտերում նշված եկամտաբերությունների հավասարության դեպքում այդ հայտերը Հերթում դասակարգվում են ըստ հայտի ներկայացման ժամանակային առաջնահերթության:

44) Աճուրդի ընթացքում մինչև հայտերի ներկայացման համար սույն կանոններով սահմանված ժամանակահատվածի ավարտը Աճուրդի մասնակիցներն իրավունք ունեն հանելու Հերթում գտնվող՝ իրենց կողմից ներկայացված հայտերը, ինչպես նաև փոփոխել դրանցում նշված պայմանները:

45) Աճուրդների ընթացքում հայտերի ներկայացման համար սույն կանոններով սահմանված ժամանակահատվածի ընթացքում Օպերատորը ծրագրային համակարգի միջոցով մեկ րոպե պարբերականությամբ ստուգում է Աճուրդի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի նկատմամբ սույն կանոններով սահմանված պահանջների պահպանման փաստը և պահանջներին չբավարարող հայտերի մասին հաջորդող հինգ րոպեի ընթացքում ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցով տեղեկացնում է համապատասխան Աճուրդի մասնակցին: Հայտերի ներկայացման համար սույն կանոններով սահմանված ժամանակահատվածի ավարտին հաջորդող հինգ րոպեի ընթացքում սահմանված պահանջներին չբավարարող հայտերը հեռացվում են Համակարգից: Ընդ որում, սահմանված քանակից կամ ծավալից ավել ներկայացված հայտերի առկայության դեպքում տվյալ Աճուրդի մասնակցի կողմից ավել ներկայացված հայտերը Համակարգից հեռացվում են սույն կանոնների 43) կետին համապատասխան հայտերի հերթում ընդգրկման առաջնահերթության նվազման կարգով՝ սկսած հայտերի հերթի ստորին հորիզոնականից:

46) Աճուրդների ընթացքում մինչև կտրման տարեկան եկամտաբերությամբ հայտի մուտքագրման և աճուրդների անցկացման համար սույն կանոններով սահմանված ժամանակահատվածի ավարտը Թողարկողն իրավունք ունի հանել իր կողմից Համակարգ մուտքագրված հայտը, ինչպես նաև փոփոխել դրանում նշված պայմանները:

47) Թողարկողն իրավունք չունի աճուրդի ընթացքում տեղաբաշխել կամ հետգնել նախապես հայտարարված ծավալը գերազանցող պարտատոմսեր:

48) Աճուրդների բացումն ու փակումն ազդարարվում է Համակարգի միջոցով աճուրդի մասնակիցներին ավտոմատ ուղարկվող համապատասխան հաղորդագրությամբ:

Գլուխ 5. Տեղաբաշխման աճուրդի պայմանները

49) Տեղաբաշխման աճուրդը կազմակերպվում է հետևյալ փուլերով՝
ա) Օպերատորի կողմից Համակարգում տեղաբաշխման աճուրդի բացում,
բ) Աճուրդի մասնակցի կողմից պարտատոմսեր ձեռք բերելու նպատակով գնման հայտերի ներկայացում Համակարգ,
գ) Աճուրդի մասնակիցների հայտերի ներկայացման գործընթացի դադարեցում,

դ) Աճուրդի մասնակիցների գնման հայտերի նկատմամբ սույն կանոններով սահմանված պահանջներին չբավարարող հայտերի հեռացում,
ե) Թողարկողի կողմից կտրման տարեկան եկամտաբերության որոշում, դրա հիման վրա Թողարկողի կողմից վաճառքի հայտի ներկայացում,
զ) պարտատոմսերով առուվաճառքի գործարքների կնքում:

50) Տեղաբաշխման աճուրդի ընթացքում Աճուրդի մասնակիցների կողմից պարտատոմսերի գնման հայտերը ներկայացվում են առանց գումարային սահմանափակումների:

51) Կտրման տարեկան եկամտաբերությունից փոքր կամ հավասար եկամտաբերությամբ՝ Աճուրդի մասնակիցների գնման հայտերը կարող են բավարարվել դրանցում նշված եկամտաբերությամբ և Թողարկողի վաճառքի հայտում նշված ծավալի սահմաններում, ընդ որում՝ կտրման տողի հայտը բավարարվում է այն ծավալով, մինչև լրանա տեղաբաշխման ամբողջ ծավալը:

Գլուխ 6. Տեղաբաշխման լրացուցիչ աճուրդի պայմանները

52) Տեղաբաշխման աճուրդի կայանալու դեպքում նույն թողարկման պարտատոմսերով սույն կանոններով սահմանված կարգով կարող է կազմակերպվել տեղաբաշխման լրացուցիչ աճուրդ՝ վերջնահաշվարկի նույն ամսաթվով և տեղաբաշխման աճուրդի ընթացքում տեղաբաշխված պարտատոմսերի ընդհանուր ծավալի մինչև 20 տոկոսի չափով, բացառությամբ այն դեպքերի, երբ տեղաբաշխման աճուրդի վերջնահաշվարկն իրականացվում է տեղաբաշխման աճուրդի օրը: Թողարկողը պարտատոմսերի տեղաբաշխման լրացուցիչ աճուրդի ամսաթվի նախորդ աշխատանքային օրը՝ մինչև ժամը 15:00-ը, ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցով օպերատորին է փոխանցում տեղաբաշխման լրացուցիչ աճուրդի կազմակերպման մասին հայտարարությունը, որում նշվում է տեղաբաշխման լրացուցիչ աճուրդի ժամանակ տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալը՝ տեղաբաշխման աճուրդի ընթացքում տեղաբաշխված պարտատոմսերի ընդհանուր ծավալի նկատմամբ տոկոսային հարաբերությամբ:

53) Տեղաբաշխման լրացուցիչ աճուրդը կազմակերպվում է հետևյալ փուլերով՝
ա) Օպերատորի կողմից Համակարգում տեղաբաշխման լրացուցիչ աճուրդի բացում, որում պարտադիր նշվում է տեղաբաշխման լրացուցիչ աճուրդի եկամտաբերությունը, որը հավասար է տեղաբաշխման աճուրդի ընթացքում կնքված գործարքների միջին կշռված եկամտաբերությանը,
բ) Աճուրդի մասնակիցների կողմից պարտատոմսեր ձեռք բերելու նպատակով գնման հայտերի ներկայացում Համակարգ,
գ) Աճուրդի մասնակիցների հայտերի ներկայացման գործընթացի դադարեցում,
դ) Աճուրդի մասնակիցների գնման հայտերի նկատմամբ սույն կանոններով սահմանված պահանջներին չբավարարող հայտերի հեռացում,
ե) տվյալ թողարկման պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի ընթացքում ձևավորված միջին կշռված եկամտաբերության հիման վրա Թողարկողի կողմից վաճառքի հայտի ներկայացում,
զ) պարտատոմսերով առուվաճառքի գործարքների կնքում:

54) Տեղաբաշխման լրացուցիչ աճուրդին կարող են մասնակցել միայն այն Աճուրդի մասնակիցները, որոնք մասնակցել են տեղաբաշխման աճուրդին և որոնց կողմից տեղաբաշխման աճուրդի ընթացքում Համակարգ ներկայացված գնման հայտերով կնքվել են գործարքներ: Ընդ որում, տեղաբաշխման լրացուցիչ աճուրդի համար Աճուրդի մասնակիցների կողմից ներկայացվող գնման հայտերում նշվում է տվյալ պարտատոմսի տեղաբաշխման աճուրդի ընթացքում ձևավորված միջին կշռված եկամտաբերությունը:

55) Տեղաբաշխման լրացուցիչ աճուրդի ընթացքում Աճուրդի մասնակցի կողմից սեփական և հաճախորդների հայտերում նշված գումարային ծավալը չպետք է գերազանցի տեղաբաշխման աճուրդի ընթացքում տվյալ Աճուրդի մասնակցի կողմից կնքված գործարքների ընդհանուր ծավալի նկատմամբ՝ սույն կանոնների 52) կետում նշված տոկոսային հարաբերությունը:

56) Սույն կանոնների 54) և 55) կետերում նշված պահանջների կատարման ստուգումն իրականացվում է Օպերատորի կողմից՝ ծրագրային համակարգի միջոցով: Պայմանների խախտման դեպքում Օպերատորը հայտերի հերթից հեռացնում է խախտմամբ մուտքագրված հայտը:
57) Տեղաբաշխման լրացուցիչ աճուրդի ժամանակ սույն գլխի պահանջներին բավարարող բոլոր հայտերը բավարարվում են ամբողջ ծավալով և դրանցով գործարքները կնքվում են ըստ այդ հայտերի՝ Համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության:

Գլուխ 7. Հետգնման աճուրդի պայմանները

58) Հետգնման աճուրդը կազմակերպվում է հետևյալ փուլերով՝
   ա) Օպերատորի կողմից Համակարգում հետգնման աճուրդի բացում,
   բ) Աճուրդի մասնակիցների կողմից պարտատոմսեր վաճառելու նպատակով վաճառքի հայտերի ներկայացում Համակարգ,
   գ) Աճուրդի մասնակիցների վաճառքի հայտերի ներկայացման գործընթացի դադարեցում,
   դ) Աճուրդի մասնակիցների վաճառքի հայտերի նկատմամբ սույն կանոններով սահմանված պահանջներին չբավարարող հայտերի հեռացում,
   ե) Թողարկողի կողմից կտրման տարեկան եկամտաբերության որոշում (նախապես հայտարարված աճուրդի եկամտաբերության առկայության դեպքում կտրման եկամտաբերությունը հավասար է այդ եկամտաբերությանը), դրա հիման վրա Թողարկողի կողմից գնման հայտի ներկայացրում,
   զ) պարտատոմսերով առուվաճառքի գործարքների կնքում:
59) Հետգնման աճուրդի ընթացքում Աճուրդի մասնակիցների կողմից պարտատոմսերի վաճառքի հայտերը ներկայացվում են առանց գումարային սահմանափակումների:
60) Կտրման տարեկան եկամտաբերությունից մեծ կամ հավասար եկամտաբերությամբ՝ Գործակալների վաճառքի հայտերը կարող են բավարարվել Թողարկողի գնման հայտում նշված ծավալի սահմաններում, ընդ որում՝ կտրման տողի հայտը բավարարվում է այն ծավալով, մինչև լրանա հետգնման ամբողջ ծավալը:

Գլուխ 8. Աճուրդի կազմակերպման կարգը

61) Աճուրդ կարող է կազմակերպվել Համակարգում գրանցված պարտատոմսերի համար: Համակարգում պարտատոմսերի գրանցման համար Կենտրոնական պահառուն այդ պարտատոմսերի թողարկման ամսաթվից ոչ ուշ, քան 5 (հինգ) աշխատանքային օր առաջ (երկու աշխատանքային օր առաջ, եթե կարճաժամկետ պարտատոմս է, որի մարման ժամկետը մինչև 13 շաբաթ է) մինչև ժամը 15:00-ը ՍիԲիԷյՆեթ համակարգչային ցանցով Օպերատորին է ներկայացնում տվյալ թողարկման պարտատոմսերի՝ Կենտրոնական պահառուի պահառուական համակարգում գրանցման հաստատումը, իսկ Թողարկողը ներկայացնում է տվյալ պարտատոմսերի վերաբերյալ առնվազն հետևյալ տեղեկությունները՝
   ա) Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա ԲԲԸ-ի կողմից տվյալ թողարկման պարտատոմսին շնորհված միջազգային տարբերակիչ ծածկագիրը,
   բ) պարտատոմսի դասը (տեսակը),
   գ) պարտատոմսի թողարկման ծավալը, թողարկման և մարման ամսաթվերը (օր/ամիս/տարի),
   դ) արժեկտրոնի եկամտաբերությունը (առկայության դեպքում),
   ե) արժեկտրոնների վճարման պարբերականությունը (առկայության դեպքում),
   զ) արժեկտրոնների վճարման ամսաթվերը (օր/ամիս/տարի) (առկայության դեպքում) կամ դրանց որոշման կարգը,
   է) պարտատոմսի շրջանառության վերջին օրը (օր/ամիս/տարի):
62) Սույն կանոնների 61) կետում նշված տեղեկությունները ստանալուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Օպերատորն ապահովում է տվյալ թողարկման պարտատոմսերի գրանցումը Համակարգում: Յուրաքանչյուր թողարկման պարտատոմս

Համակարգում գրանցվում է միայն մեկ անգամ, որի ընթացքում Համակարգ են մուտքագրվում պարտատոմսերի վերաբերյալ սույն կանոնների 61) կետում նշված տեղեկությունները:

63) Թողարկողը պարտատոմսերով աճուրդ կազմակերպելու համար յուրաքանչյուր աճուրդի օրվանից առնվազն երկու աշխատանքային օր առաջ (մեկ աշխատանքային օր առաջ, եթե կարճաժամկետ պարտատոմս է, որի մարման ժամկետը մինչև 13 շաբաթ է)՝ մինչև ժամը 11:00-ը, ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցով Օպերատորին է ներկայացնում տվյալ աճուրդի կազմակերպման վերաբերյալ հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն), որը պետք է պարունակի առնվազն հետևյալ տեղեկությունները՝
   ա) Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա ԲԲԸ-ի կողմից տվյալ թողարկման պարտատոմսին շնորհված միջազգային տարբերակիչ ծածկագիրը,
   բ) աճուրդի տեսակը՝ տեղաբաշխում կամ հետգնում,
   գ) պարտատոմսի թողարկման ծավալը,
   դ) տեղաբաշխման կամ հետգնման ենթակա պարտատոմսերի ծավալը,
   ե) աճուրդի եկամտաբերությունը՝ առկայության դեպքում,
   զ) աճուրդի ամսաթիվը (օր/ամիս/տարի),
   է) վերջնահաշվարկի ամսաթիվը (օր/ամիս/տարի):

64) Հայտարարությունը ներկայացված է համարվում՝ Օպերատորի կողմից այն ստանալու պահից: Հայտարարությունում ներառված տեղեկությունները պետք է լինեն ստույգ՝ առանց որևէ փաստի խեղաթյուրման և/կամ բաց թողման:

65) Օպերատորը պարտավոր է Հայտարարությունը ստանալու օրվա մինչև ժամը 12:00-ը աճուրդի կազմակերպման վերաբերյալ հայտարարություն տարածել Օպերատորի «Տեղեկատվության բացահայտման կանոններով» սահմանված կարգով:

66) Տեղաբաշխման լրացուցիչ աճուրդի կազմակերպման դեպքում Թողարկողը տեղաբաշխման աճուրդի օրվա մինչև ժամը 15:00-ը այդ մասին ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցով տեղեկացնում է Օպերատորին, որի վերաբերյալ Օպերատորը տվյալ օրվա մինչև ժամը 16:00-ը իր «Տեղեկատվության բացահայտման կանոններով» սահմանված կարգով հայտարարություն է տարածում:

Գլուխ 9. Գործարքների կնքումը

67) Աճուրդների ընթացքում գործարքը համարվում է կնքված Համակարգում դրա կնքման փաստի գրանցման պահից:

68) Աճուրդի արդյունքում չբավարարված հայտերը չեղյալ են համարվում և հաջորդ աճուրդների ընթացքում չեն ընդգրկվում համապատասխան Հերթերում:

69) Աճուրդի ընթացքում Համակարգի կամ դրան միանալու համար նախատեսված կապի միջոցների հետ կապված տեխնիկական խնդիրների առաջացման, դրանց վերացման, աճուրդի հետաձգման և դրա պատճառով աճուրդը չկայացած ճանաչելու, ինչպես նաև այլ նմանատիպ իրավիճակների առաջացման դեպքերում ծագող հարաբերությունները կարգավորվում են Օպերատորի «Առևտրի ընդհանուր կանոններով»:

70) Աճուրդների ավարտից հետո 1 ժամվա ընթացքում, ընդ որում, վերջնահաշվարկը նույն օրն իրականացվող աճուդների դեպքում՝ ոչ ուշ, քան տվյալ աճուրդի օրվա ժամը 15:00-ը Օպերատորն իր «Առևտրի ընդհանուր կանոններին» համապատասխան ձևակերպում է կնքված գործարքների գրանցման վկայականներ, որտեղ նշվում է տվյալ Աճուրդի մասնակցի կողմից կնքված գործարքների և դրանց վերջնահաշվարկի օրվա վերաբերյալ համապատասխան տեղեկություններ:

71) Գործարքների գրանցման վկայականի էլեկտրոնային օրինակը սույն կանոնների 70) կետով սահմանված ժամկետում ուղարկվում է Աճուրդի համապատասխան մասնակցի՝ ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցի իրավասու էլեկտրոնային հասցեին, բացառությամբ սույն կանոնների 72) կետում նշված դեպքի: Գործարքների գրանցման յուրաքանչյուր վկայականի էլեկտրոնային օրինակի հաղորդագրությունը պետք է պարտադիր օժտված լինի հաղորդագրության առաքումը

և ստացումը հաստատող անդորրագրերը ստանալու հնարավորությամբ, պաշտպանված լինի էլեկտրոնային ստորագրությամբ և ծածկագրումով:

72) Այն դեպքում, երբ ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցով հաղորդագրության ուղարկումն անհնար է, գործարքի գրանցման վկայականը սույն կանոնների 70) կետով սահմանված ժամկետում պատրաստվում է թղթային կրիչով՝ երկու օրինակից, որի մեկ օրինակը ստորագրությամբ տրվում է գործարքի համապատասխան կողմի լիազորված ներկայացուցչին, իսկ երկրորդ օրինակը մնում է Օպերատորի մոտ:

73) Գործարքի գրանցման վկայականի ձևը սահմանում է Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարը:

74) Աճուրդների ավարտից 1 ժամվա ընթացքում Օպերատորը տեղաբաշխման և/կամ հետգնման աճուրդների արդյունքների վերաբերյալ ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցով հաշվետվություն է ներկայացնում Թողարկողին՝ Թողարկողի հետ համաձայնեցված ձևաչափով:

75) Գործակալներն իրենց կնքած գործարքների համար պարտավոր են Օպերատորին վճարել Օպերատորի «Սակագների մասին կանոններով» սահմանված համապատասխան միջնորդավճարները:

Գլուխ 10. Գործարքների քլիրինգի և վերջնահաշվարկի կատարումը

76) Աճուրդների ընթացքում կնքված գործարքների վերջնահաշվարկն իրականացվում է T+n ժամանակահատվածում, որտեղ T-ն գործարքի կնքման ամսաթիվն է, իսկ n-ը՝ գործարքի կնքման օրվան հաջորդող աշխատանքային օրերի թիվը, որը կարող է ունենալ 0, 1 կամ 2 արժեքը և որոշվում է Թողարկողի կողմից յուրաքանչյուր տեղաբաշխման (այդ թվում՝ տեղաբաշխման լրացուցիչ) կամ հետգնման աճուրդի համար առանձին:

77) Աճուրդի ընթացքում կնքված գործարքների քլիրինգն իրականացնում է Օպերատորը, իսկ դրա վերջնահաշվարկը՝ Հաշվարկային բանկը:

78) Աճուրդի արդյունքում կնքված գործարքների քլիրինգն ու վերջնահաշվարկն իրականացվում են համախառը քլիրինգի եղանակով՝ գործառք առ գործառք, ընդ որում՝ յուրաքանչյուր գործարքի գումարը կլորացվում է 10 (տաս) լումայի ճշտությամբ:

79) Աճուրդի ընթացքում կնքված գործարքների վերջնահաշվարկն իրականացվում է Հաշվարկային բանկում վարվող՝ Աճուրդի մասնակիցների հաճախորդների և սեփական դեպո և դրամային հաշիվներով:

80) Աճուրդների ավարտից հետո 1 ժամվա ընթացքում (T+0 ռեժիմով աճուրդի դեպքում՝ ոչ ուշ, քան տվյալ օրվա ժամը 15:00) Օպերատորը Հաշվարկային բանկի էլեկտրոնային հաղորդագրությունների առաքման համակարգի միջոցով Հաշվարկային բանկին է ներկայացնում աճուրդների արդյունքների վերաբերյալ ՀՏ 575 և ՀՏ 515 հանձնարարականները, որտեղ նշվում է նաև Աճուրդի նույնացուցիչը:

81) Սույն կանոնների 80) կետի համաձայն վերջնահաշվարկի համար Հաշվարկային բանկին ներկայացվող ՀՏ 515 հանձնարարականում Օպերատորը աճուրդների ընթացքում կնքված գործարքները դասավորում է ըստ դրանց կատարման հետևյալ հաջորդականության՝
   ա) տեղաբաշխման աճուրդի դեպքում՝ առավել ցածր տարեկան եկամտաբերությամբ կնքված գործարքները, իսկ հետգնման աճուրդի դեպքում՝ առավել բարձր տարեկան եկամտաբերության կնքված գործարքները,
   բ) հաճախորդների հաշվին կնքված գործարքները,
   գ) համակարգ ավելի վաղ ներկայացված հայտի հիման վրա կնքված գործարքները:

82) ՀՏ 515 հանձնարարականի կատարման հաստատումն Օպերատորին և Թողարկողին ուղարկվում է ՀՏ 516 հաղորդագրության միջոցով: Հաշվարկային բանկը Աճուրդի մասնակիցների կողմից կնքված գործարքների վերջնահաշվարկի արդյունքների վերաբերյալ վերջիններիս տեղեկացնում է ՀՏ 516 հաղորդագրության միջոցով:

83) Որևէ գործարքի կատարման համար համապատասխան չափով միջոցների անբավարարության դեպքում տվյալ գործարքը չի կատարվում, այդ թվում՝ մասնակի, ինչպես նաև չեն կատարվում

այդ գործարքին հաջորդող՝ Աճուրդի տվյալ մասնակցի կողմից կնքված այլ գործարքներն, անգամ եթե դրանց կատարման համար անհաժեշտ չափով համապատասխան միջոցներն առկա են Հաշվարկային բանկում վարվող տվյալ Աճուրդի մասնակցի համապատասխան հաշիվներում: Հաշվարկային բանկը վերջնահաշվարկի օրվա ժամը 16:50-ի դրությամբ համապատասխան չափով միջոցներով չապահովված գործարքների կատարումը մերժում է, որի մասին ՀՏ 516 հաղորդագրության միջոցով և շրջանակներում տեղեկացնում է Օպերատորին, Թողարկողին և Աճուրդի տվյալ մասնակցին:

Գլուխ 11. Աճուրդները չկայացած կամ չեղյալ ճանաչելը

84) Թողարկողն իրավունք ունի չբավարարել ներկայացված բոլոր հայտերը, որի դեպքում Աճուրդը սույն գլխին համապատասխան հայտարարվում է չկայացած կամ չեղյալ:

85) Աճուրդը կարող է ճանաչվել չկայացած, եթե՝
   ա) սույն կանոններով կտրման եկամտաբերության որոշման և Համակարգ մուտքագրման համար սահմանված ժամանակահատվածում Թողարկողը համակարգ չի մուտքագրում համապատասխան հայտը և Օպերատորին չի ներկայացնում սահմանված ժամանակահատվածը երկարաձգելու միջնորդություն,
   բ) Աճուրդի մասնակիցների հայտերի ընդունման համար սույն կանոններով սահմանված ամբողջ ժամանակահատվածում Աճուրդի մասնակիցների կողմից բավարարման ենթակա որևէ հայտ չի ներկայացվել:

86) Աճուրդը կարող է չեղյալ ճանաչվել, եթե՝
   ա) Թողարկողը մինչև տեղաբաշխման և/կամ հետգնան աճուրդի ավարտը Համակարգի միջոցով չեղարկում է սկսված աճուրդը,
   բ) Համակարգի կամ դրան միանալու համար նախատեսված կապի միջոցների հետ առաջացել են տեխնիկական խնդիրների և դրանք հնարավոր չի եղել վերացնել 2 (երկու) ժամվա ընթացքում:

87) Աճուրդը չկայացած կամ չեղյալ ճանաչվելու դեպքում Աճուրդի մասնակիցներն այդ մասին անմիջապես ծանուցվում են Աճուրդի համակարգի միջոցով, բացառությամբ սույն կանոնների 86) կետի բ) ենթակետով սահմանված դեպքի, երբ ծանուցումն Օպերատորը 30 (երեսուն) րոպեի ընթացքում ուղարկում է ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցով:

88) Աճուրդը չկայացած կամ չեղյալ ճանաչվելու դեպքում Օպերատորն այդ մասին 30 (երեսուն) րոպեի ընթացքում իր «Տեղեկատվության բացահայտման կանոններով» սահմանված կարգով հայտարարություն է հրապարակում:

Գլուխ 12. Կանոններում փոփոխությունները և լրացումները

89) Սույն կանոններում փոփոխություններն ու լրացումները դրա անբաժանելի մասն են:

լուսանկար (3x4 սմ)

Հավելված 1

Տեղեկություններ Առևտրի մասնակցի վերաբերյալ

Առևտրի մասնակցի անունը, ազգանունը և հայրանունը		
Թողարկողի կազմում առևտրի մասնակցի զբաղեցրած պաշտոնը		
Առևտրի մասնակցի անձնագրի տվյալները (սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել) կամ ID		
Առևտրի մասնակցի ծննդյան ամսաթիվը, ծննդավայրը, քաղաքացիությունը		
Կապի միջոցներ	հեռախոս	
	ֆաքս	
	էլեկտրոնային փոստ	
	ՍիԲիԷյՆեթ համակարգչային ցանցի էլեկտրոնային հասցե	
	այլ	
Առևտրի մասնակցի ստորագրության նմուշը		

Լիազորված ներկայացուցիչ՝ _____ _____ _____

(պաշտոնը) (անուն, ազգանուն) (ստորագրություն)

Կ.Տ.

«_____»_____թ.

<u>Հավելված 2</u>

Առևտրի մասնակցին տրամադրվող
իրավունքների քարտ

_____ _____
(քարտի տրման վայրը) (տրման ամսաթիվը)

Սույն քարտով _____
(Թողարկողի անվանումը)

(այսուհետ՝ Թողարկող) իր աշխատակից _____-ին
(անուն, ազգանուն)

(անձնագիր՝ ___ _____, տրված «____» _____ _____թ.-ին_____-ի կողմից, կամ ID _____)

իրավունք է տալիս՝

1) «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում (այսուհետ՝ Օպերատոր) պետական պարտատոմսերով կազմակերպվող տեղաբաշխման (հետգնման) աճուրդների ընթացքում հանդես գալ որպես Թողարկողի առևտրի մասնակից՝ հետևյալ իրավասություններով՝

   ա) Համակարգում տեղաբաշխման (հետգնման) աճուրդի բացում,

   բ) Աճուրդի ժամանակ Համակարգ Թողարկողի վաճառքի (գնման) հայտի մուտքագրում,

2) ստանալու Օպերատորի կողմից Թողարկողի առևտրի մասնակցին տրամադրվող՝ Համակարգ առաջին անգամ մուտք գործելու ծածկագիրը և գաղտնաբառը,

ինչպես նաև կատարելու սույն քարտով տրված իրավունքների հետ կապված բոլոր անհրաժեշտ գործողությունները:

Լիազորված
ներկայացուցիչ՝ _____ _____ _____
(պաշտոնը) (անուն, ազգանուն) (ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ
Առևտրի մասնակցին տրամադրվող իրավունքների քարտի դադարեցման մասին

Սույնով _____
(Թողարկողի անվանումը)

(այսուհետ՝ Թողարկող) տեղեկացնում է, որ դադարեցնում է իր կողմից «_____» _____ _____թ.-ին _____-ին տրված և Օպերատորին
(անուն, ազգանուն)

ներկայացված՝ առևտրի մասնակցին տրամադրվող իրավունքների քարտի գործողությունը:

Խնդրում ենք «_____»_____թ.-ից դադարեցնել առևտրի մասնակից

_____-ին նշված քարտով վերապահված բոլոր
(անուն, ազգանուն)

իրավասությունները:

Լիազորված
ներկայացուցիչ՝ _____ _____ _____
(պաշտոնը) (անուն, ազգանուն) (ստորագրություն)

Կ.Տ.

«_____»_____թ.